

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«ԿԱՍԿԱԴ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի
բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
14/02/2008թ. թիվ 01/08 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկում
11/03/2008թ. թիվ 58Ա որոշմամբ

Պետական գրանցման համարը՝ 3

Փոփոխված բաժնետերերի արտահերթ ընդհանուր
ժողովի 21/10/2008թ. թիվ 05/08
որոշմամբ

բաժնետերերի արտահերթ ընդհանուր
ժողովի 27/11/2009թ. թիվ 04/09
որոշմամբ

բաժնետերերի արտահերթ ընդհանուր
ժողովի 26/11/2010թ. թիվ 05/10
որոշմամբ

բաժնետերերի արտահերթ ընդհանուր
ժողովի 23/02/2012թ. թիվ 01/12
որոշմամբ

միակ բաժնետիրոջ 01/03/2012թ. թիվ
01/12 որոշմամբ

Փոփոխությունը գրանցված է 16/02/2009թ. թիվ
1/152Ա որոշմամբ

25/12/2009թ. թիվ
1/1579Ա որոշմամբ

22/12/2010թ. թիվ
1/1878Ա որոշմամբ

27/02/2012թ. թիվ
1/161Ա որոշմամբ

___/___/2012թ. թիվ
___ որոշմամբ

միակ բաժնետեր՝ անհատ ընկերության
Արևշատ Մեխքստեյան

Արևշատ Մեխքստեյան



ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Արթուր Զավադյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՍԿԱԴ ԻՆՇՈՒՐԱՆՍ»

Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՀՈԴՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ԿԱՍԿԱԴ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է ՀՀ օրենսդրության համաձայն: Ընկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ստանում ՀՀ լիազոր մարմնի կողմից գրանցվելու պահից:
2. Ընկերության գործունեության հիմնական տեսակն է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովագրական գործունեության իրականացումը, որն Ընկերությունը կարող է իրականացնել ՀՀ լիազոր մարմնի կողմից լիցենզավորումից հետո:
3. Ընկերությունը, իր մասնաճյուղերն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող են իրականացնել ապահովագրական գործունեությունից բխող կամ դրա հետ ուղղակիորեն կապված հետևյալ գործառնությունները՝
 - 3.1. ներդնել և կառավարել Ընկերության միջոցները «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով թույլատրված ակտիվներում և սահմանաչափերով.
 - 3.2. իրականացնել իր, ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձանց ակտիվների և պարտավորությունների կառավարումը.
 - 3.3. իրականացնել ածանցյալ ֆինանսական գործիքներով գործառնությունները, եթե դրանք օգտագործվում են ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման ռիսկերը ծածկելու համար՝ կապված փոխարժեքի, տոկոսադրույքների փոփոխությունից բխող և այլ ռիսկերի հետ.
 - 3.4. գնահատել ապահովագրական ռիսկերը.
 - 3.5. ստանձնել և օտարել սուբրոգացիայի արդյունքում ապահովագրողի սեփականությանն անցած գույքը և այլ իրավունքները.
 - 3.6. բացահայտել ապահովագրական պատահարի առաջացման պայմանները և պատճառները.
 - 3.7. գնահատել ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների և ապահովագրական հատուցման և ապահովագրության պայմանագրից բխող այլ վճարումների չափը.
 - 3.8. գնահատել ապահովագրության օբյեկտի արժեքը.
 - 3.9. իրականացնել միջոցառումներ՝ ուղղված ապահովագրական պատահարների կանխարգելմանը, դրանց արդյունքում հնարավոր վնասների նվազեցմանը, այդ միջոցառումները ֆինանսավորելու նպատակով ձևավորել միջոցներ.
 - 3.10. ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրով նախատեսված լինելու դեպքում ստուգել ապահովագրված նյութական արժեքների պահպանման վիճակը և թերությունների հայտնաբերման դեպքում պահանջել դրանց վերացումը՝ սահմանելով հիմնավոր ժամկետներ.
 - 3.11. ստեղծել և սպասարկել հաճախորդների վերաբերյալ տեղեկատվական համակարգ:
4. ՀՀ Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է թույլատրել Ընկերության իրականացնելու Օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ ուղղակի կապված են ապահովագրական գործունեության կամ կանոնադրության հոդված 1-ի 3-րդ կետով նախատեսված գործառնությունների հետ, և եթե դրանք թույլատրելը չի հակասում Օրենքի նպատակներին և չի վտանգում ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների շահերը:
5. Ընկերությունները կարող են կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրենց՝ Օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար: Ընկերությունները չեն կարող իրականացնել արտադրական, առևտրային, բանկային ու վարկային կազմակերպության գործունեություն, եթե Օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:
6. Ընկերությունները կարող են իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ իրենց անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել:

ՀՈԴՎԱԾ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

1. Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է.
հայերեն՝ «ԿԱՍԿԱԴ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն
անգլերեն՝ “CASCADE INSURANCE” Insurance Closed Joint Stock Company
ռուսերեն՝ Страховое Закрытое Акционерное Общество “КАСКАД ИНШУРАНС”
2. Ընկերության կրճատ անվանումն է.
հայերեն՝ «ԿԱՍԿԱԴ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ
անգլերեն՝ “CASCADE INSURANCE” Insurance CJSC
ռուսերեն՝ Страховое ЗАО “КАСКАД ИНШУРАНС”

ՀՈԴՎԱԾ 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

Ընկերության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հրաչյա Քոչարի 5/1:

ՀՈԴՎԱԾ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԸ

1. Ընկերությունը փակ բաժնետիրական ընկերություն է:
2. Ընկերությունն իրավաբանական անձ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվամբ կլոր կնիք, դրոշմակնիքներ, ձևաթղթեր և իրավաբանական անձին հատուկ այլ ռեկվիզիտներ: Ընկերությունը կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային և սպասարկման նշաններ:
3. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում:

ՀՈԴՎԱԾ 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴԱՍԵՐԸ

1. Ապահովագրության տեսակներն են՝
 - 1.1. կյանքի ապահովագրությունից բացի, ցանկացած այլ ապահովագրություն (այսուհետ՝ ոչ կյանքի ապահովագրություն).
2. Ոչ կյանքի ապահովագրության դասերն են՝
 - 2.1 **դժբախտ պատահարներից ապահովագրություն** (ներառյալ՝ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններից)՝
 - ա. ամրագրված դրամական հատուցմամբ,
 - բ. հատուցմամբ՝ կախված պատահարի բնույթից,
 - գ. սույն կետի "ա" և "բ" ենթակետերը միասին,
 - դ. ուղևորների վնասվածքների.
 - 2.2 **առողջության ապահովագրություն**՝
 - ա. ամրագրված դրամական հատուցմամբ,
 - բ. հատուցմամբ՝ կախված պատահարի բնույթից,
 - գ. սույն կետի "ա" և "բ" ենթակետերը միասին.
 - 2.3 **ցամաքային տրանսպորտի ապահովագրություն** (բացառությամբ երկաթուղային), որը ծածկում է այն վնասները կամ կորուստները, որոնք պատճառվել են՝
 - ա. ցամաքային ավտոտրանսպորտին,
 - բ. ցամաքային այլ տրանսպորտին.
 - 2.4 **փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն**, որը ծածկում է այն վնասները և կորուստները, որոնք պատճառվել են փոխադրման գործընթացի մեջ գտնվող գույքին (բեռներին)՝ անկախ փոխադրամիջոցի տեսակից.
 - 2.5 **հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն**, որը ծածկում է այն վնասները և կորուստները, որոնք հասցվել են գույքին (բացառությամբ գույքի այն տեսակների, որոնք

ներառված են Օրենքի 7-րդ հոդվածի 3-7-րդ կետերով սահմանված դասերում) հետևյալ պատահարների հետևանքով՝

- ա. հրդեհ,
- բ. պայթյուն,
- գ. երկրաշարժ,
- դ. փոթորիկ,
- ե. միջուկային վարակ, վնասվածք և այլն,
- զ. հողի սողանք.

2.6 **գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն**, որը ծածկում է այն վնասները և կորուստները, որոնք հասցվել են գույքին (բացառությամբ գույքի այն տեսակների, որոնք ներառված են Օրենքի 7-րդ հոդվածի 3-7-րդ կետերով սահմանված դասերում) հետևյալ պատահարների արդյունքում և նշված չեն Օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված դասում՝

- ա. կարկտահարություն,
- բ. ցրտահարություն,
- գ. երաշտ,
- դ. համաճարակ, կարանտին հիվանդություն,
- ե. սելավ, ջրհեղեղ,
- զ. բնական ու տեխնածին բնույթի այլ աղետներ, վթարներ ու պատահարներ, ներառյալ՝ գույքի հափշտակությունը.

2.7 **ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն**.

2.8 **ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն** (պատասխանատվության բոլոր այն տեսակները, որոնք ներառված չեն Օրենքի 7-րդ հոդվածի 10-12-րդ կետերով նախատեսված դասերում).

2.9 **ֆինանսական վնասների ապահովագրություն**, որոնք առաջանում են՝

- ա. աշխատանքային ռիսկերից,
- բ. եկամտների թերստացումից (ընդհանուր),
- գ. վատ եղանակից,
- դ. բաց թողնված օգուտից,
- ե. շարունակական (ընթացիկ) ընդհանուր ծախսերից,
- զ. չնախատեսված առևտրային ծախսերից,
- է. շուկայական արժեքի կորստից,
- ը. վարձավճարի կամ այլ եկամտի կորստից,
- թ. անուղղակի առևտրային կորուստներից, որոնք նշված չեն սույն կետի "ա"-ը" ենթակետերում,
- ժ. այլ ֆինանսական ոչ առևտրային կորուստներից,
- ժա. ֆինանսական կորուստների այլ ձևերից.

2.10 **աջակցության ապահովագրություն**, որը ծածկում է ճանապարհորդության մեջ կամ իրենց մշտական բնակության վայրից հեռու գտնվող անձանց աջակցության տրամադրումը:

ՀՈԴՎԱԾ 6. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՉԱՓԸ

1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,717,980,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր տասնյոթ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմված է 41,100 (քառասունմեկ հազար մեկ հարյուր) հասարակ անվանական բաժնետոմսերից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 41,800 (քառասունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:
2. Ընկերության բաժնետերերի ռեստորի վարումն ու պահպանումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով մասնագիտացված կազմակերպության կողմից:
3. Ռեստորի վարումը, դրանում գրառումների կատարումը և սեփականատերերի անձնական հաշիվների սպասարկումը կատարվում է ՀՀ օրենքների և իրավական ակտերին համապատասխան:

4. Ընկերության բոլոր 41,100 (քառասունմեկ հազար մեկ հարյուր) հասարակ անվանական բաժնետոմսերը տեղաբաշխված և ամբողջությամբ վճարված են դրամով Ընկերության բաժնետերերի կողմից:
5. Ընկերության բաժնետոմսերը պատկանում են հետևյալ միակ բաժնետիրոջը՝

Բաժնետիրոջ անվանումը	Բաժնետոմսերի քանակը (հատ)	Գումարը (<< դրամ)	Տոկոսը (%)
անհատ ձեռնարկատեր Արևշատ Մելիքսեթյան	41,100	1,717,980,000	100

6. Ընկերությունը հայտարարված և չթողարկված հասարակ անվանական բաժնետոմսեր չունի:
7. Ընկերությունը կարող է ավելացնել կանոնադրական կապիտալն ավելացնելով բաժնետոմսերի անվանական արժեքը կամ տեղաբաշխելով լրացուցիչ բաժնետոմսեր, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերն ամբողջությամբ վճարվել են:
8. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում ավելացվող գումարն ամբողջությամբ պետք է վճարված լինի << Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և Ընկերության հետ չփոխկապակցված որևէ բանկում բացված կուտակային հաշվին:
9. Ընկերության բաժնետոմսերը հասարակ անվանական բաժնետոմսեր են՝ քվեարկության հավասար իրավունքով: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են (ապանյութականացված):
10. Ընկերության յուրաքանչյուր հասարակ անվանական մեկ բաժնետոմսը դրա սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջն իրավունք է տալիս.
 - 10.1 մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
 - 10.2 մասնակցել Ընկերության կառավարմանը.
 - 10.3 ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
 - 10.4 առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե << օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.
 - 10.5 ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության գործունեությանը, ինչպես նաև Օրենքի 84-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվությանը.
 - 10.6 ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
 - 10.7 հանդես գալ առաջարկություններով ժողովներում.
 - 10.8 ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
 - 10.9 դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
 - 10.10 Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.
 - 10.11 երրորդ անձանց օտարել կամ այլ կերպ փոխանցել սեփականության իրավունքով իրենց պատկանող բաժնետոմսերը գործող օրենսդրությամբ և բաժնետերերի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով:
 - 10.12 իրականացնել Ընկերության կանոնադրությամբ և բաժնետերերի միջև կնքված պայմանագրով սահմանված այլ իրավունքներ:
11. Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք, բաժնետոմսերի վաճառքի առաջարկման օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում, << օրենսդրությամբ և բաժնետերերի միջև կնքված պայմանագրերով սահմանված կարգով:
12. Ընկերության բաժնետերերն ունեն 15 (տասնհինգ) օրվա ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք:
13. Վերոհիշյալ իրավունքները բաժնետերերը ձեռք են բերում իրենց բաժնետոմսերի լրիվ արժեքը վճարելուց հետո միայն:

14. Ընկերության կանոնադրական կապիտալը համալրվում է միայն փողով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:
15. Կանոնադրական կապիտալի փոփոխություններն ուժի մեջ են մտնում կանոնադրությունում համապատասխան փոփոխությունները կատարելուց և ՀՀ Կենտրոնական բանկում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ փոփոխությունները գրանցելուց հետո:
16. Ընկերության բաժնետոմս ձեռք բերող անձը բաժնետիրոջ իրավունքներ է ձեռք բերում բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրառման պահից:
17. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և օրենքով սահմանված այլ արժեթղթեր:

ՀՈԴՎԱԾ 7. ՇԱՀՈՒԹԱՔԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով բոլոր հարկերը վճարելուց և հիմնադրամներին մասնահանումներ կատարելուց հետո Ընկերության շահույթը տնօրինվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված կարգով:
2. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):
3. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամսյակային կամ տարեկան շահութաբաժինների բաշխման կամ վճարման մասին, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ:
4. Տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված շահույթը կարող է բաշխվել Ընկերության բաժնետերերի միջև կամ տեղափոխվել հաջորդ ֆինանսական տարի, եթե պարտադիր պահուստները կամ կանոնադրությամբ սահմանված այլ պահուստները ստեղծված և ամբողջությամբ համալրված են:
5. Ընկերության կանոնադրական կապիտալի հաշվին շահութաբաժինների վճարումն արգելվում է:
6. Ընկերությունն իրավունք չունի վճարելու տարեկան շահութաբաժիններ, եթե՝
 - 6.1. շահութաբաժինների վճարման պահին կամ վճարման հետևանքով Ընկերությունը խախտում է կամ կարող է խախտել Օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը.
 - 6.2. ՀՀ Կենտրոնական բանկն Ընկերությունից պահանջել է վերացնել ֆինանսական կամ այլ հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության անարժանահավատությունը և Ընկերությունը չի կատարել խախտումը վերացնելու հանձնարարականը.
 - 6.3. շահութաբաժինների վճարման պահին Ընկերության կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Ընկերությունում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:
7. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընկերության Ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների (եռամսյակային ու կիսամսյակային) վճարման ժամկետը սահմանվում է Ընկերության Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո: Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝
 - 7.1. միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.
 - 7.2. տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:
8. Միջանկյալ շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության Խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության Ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել

նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

9. Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:
10. Եթե Ընկերության Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան հաստատված շահութաբաժինների չափը գերազանցում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինները, ապա տարեկան շահութաբաժինը վճարվում է սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:
11. Ընդհանուր ժողովն իրավունք ունի շահութաբաժիններ չվճարելու որոշում ընդունելու, իսկ բաժնետիրական ընկերություն հանդիսացող Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:
12. Ընկերության պարտավորությունների ապահովման և հնարավոր կորուստների ծածկման նպատակով Ընկերությունը ձևավորում է պահուստային հիմնադրամ՝ Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 15%-ի (տասնհինգ տոկոսի) չափով:
13. Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամեր:
14. Ընկերության պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:
15. Պահուստային հիմնադրամն այլ նպատակների համար չի կարող օգտագործվել:

ՀՈԴՎԱԾ 8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

1. Ընկերության կառավարման մարմիններն են՝
 - Ընդհանուր ժողովը.
 - Խորհուրդը.
 - Գործադիր մարմինը՝ Գործադիր տնօրենը (Օրենքով նախատեսված կարգով Ընկերությունը կարող է ձևավորել նաև տնօրինություն):
2. Ընկերության ղեկավարներն են՝ Խորհրդի նախագահը և անդամները, Գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, պատասխանատու ակտուարը (պատասխանատու ակտուարը հանդիսանում է ակտուարային ստորաբաժանման ղեկավար), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանման (վարչության, բաժնի, խմբի կամ այլ միավորի) ղեկավարը և գլխավոր հաշվապահը, մասնաճյուղի առկայության դեպքում նաև մասնաճյուղի տնօրենը, նրա տեղակալը, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը:
3. Ընկերության ղեկավարներին (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, ինչպես նաև մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը սահմանվում է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:
4. Ընկերության կառավարման մարմինների անդամների, գլխավոր հաշվապահի, ներքին աուդիտի ղեկավարի ու պատասխանատու ակտուարի պաշտոնները թափուր մնալու դեպքում Ընկերությունը պարտավոր է ինսուսնօրյա ժամկետում Օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով նշանակել կառավարման մարմինների անդամներին, գլխավոր հաշվապահին, ներքին աուդիտի ղեկավարին ու պատասխանատու ակտուարին:
5. Ընկերության ընդհանուր կազմակերպական կառուցվածքը հետևյալն է.
 - 5.1. Ընդհանուր ժողով,
 - 5.2. Խորհուրդ,
 - 5.3. Գործադիր տնօրեն և նրա տեղակալներ
 - 5.4. Ներքին աուդիտի ստորաբաժանում,

5.5. Պատասխանատու ակտուար,

5.6. Վարչություններ. հաշվապահական հաշվառման, գործառնական, անդերռայթինգի, հայցերի կարգավորման, ինչպես նաև ընդհանուր և օժանդակ այլ բաժիններ և կոմիտեներ:

ՀՈԴՎԱԾ 9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է, որի բացառիկ իրավասություններն են՝
 - 1.1 Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
 - 1.2 Ընկերության վերակազմակերպումը.
 - 1.3 Ընկերության լուծարումը.
 - 1.4 ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
 - 1.5 Ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընդ որում, Ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
 - 1.6 հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
 - 1.7 բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
 - 1.8 Խորհրդի ներկայացմամբ՝ Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
 - 1.9 ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում.
 - 1.10 Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
 - 1.11 հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
 - 1.12 բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.
 - 1.13 շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքման մասին որոշման ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում.
 - 1.14 խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում.
 - 1.15 Խորհրդի անդամների վարձատրության կամ փոխհատուցման չափի սահմանումը.
 - 1.16 օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի ձեռքբերման Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
 - 1.17 ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.
 - 1.18 դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
 - 1.19 դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը.
 - 1.20 իրավաբանական անձանց միությունների հիմնադիր հանդես գալը.
 - 1.21 իրավաբանական անձանց միություններին մասնակցությունը.
 - 1.22 Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
 - 1.23 Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.

- 1.24 օրենքով նախատեսված այլ հարցերով որոշումների ընդունումը:
2. Սույն կանոնադրության 9-րդ հոդվածի 1-ին կետի ենթակետերում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընկերության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել կառավարման այլ մարմիններին կամ անձանց:
 3. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ սույն կանոնադրության 9-րդ հոդվածի 1-ին կետի 1.2, 1.3 և 1.9 ենթակետերում նշված հարցերի: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Ընկերության ընդհանուր ժողովի հեռակա նիստերը գումարվում են Ընկերության կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով՝ նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն: Ընդ որում, ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
 4. Ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:
 5. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենքով կամ սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակություն սահմանված չէ:
 6. Սույն կանոնադրության 9-րդ հոդվածի 1-ին կետի 1.1, 1.2, 1.4, 1.6, և 1.14 ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:
 7. Սույն կանոնադրության 9-րդ հոդվածի 1-ին կետի 1.3 և 1.10 ենթակետում սահմանված հարցով որոշումներն ընդունում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովը դրան մասնակցող՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս, քան ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:
 8. Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ այդ որոշումներն ընդունելու պահից 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում:
 9. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի ընդունած որոշումը, եթե տվյալ բաժնետերը չի մասնակցել ժողովին կամ դեմ է քվեարկել, և նրա իրավունքներն ու օրինական շահերը ոտնահարվել են նշված որոշմամբ: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա և թույլ տված խախտումներն էական չեն:
 10. Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
 11. Տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը Ընկերության բաժնետերերին ուղարկվում է այդ ժողովի կայացման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ: Ծանուցումը կատարվում է գրավոր ձևով կամ էլեկտրոնային փոստով կամ ֆաքսիմիլային կապով:
 12. Ընկերությունն իր բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման մասին ՀՀ Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ:
 13. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին, եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որոշումներ կայացնելու համար ավելի մեծ թվով ձայներ չեն պահանջվում:
 14. Քվորումի բացակայության դեպքում ոչ շուտ, քան 20 օրացուցային օր հետո հրավիրվում է նոր Ընդհանուր ժողով: Նոր Ընդհանուր ժողովը քվորում ունի, եթե ներկա են Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:
 15. Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը պետք է բովանդակի.
 - 15.1 Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը,

- 15.2 Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- 15.3 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- 15.4 Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը,
- 15.5 բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:
16. Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Մասնակցի ներկայացուցիչը կարող է մասնակցել ժողովում միայն լիազորագրի առկայության դեպքում:
17. Եթե բաժնետերը տվել է նման բնույթի երկու կամ ավելի լիազորագիր, ապա իրավաբանական ուժ ունի ավելի ուշ տրված լիազորագիրը:
18. Ընկերության բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները ժողովին ներկայանում են առանց լիազորագրի:
19. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝
- 19.1 Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև ձայնի իրավունք տվող մասնակցության անվանատերերը.
- 19.2 Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը՝ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով.
- 19.3 Ընկերության բաժնետեր չհանդիսացող Խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.
- 19.4 Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդներ.
- 19.5 Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).
- 19.6 պատասխանատու ակտուարը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).
- 19.7 ՀՀ Կենտրոնական բանկի լիազորած պաշտոնատար անձինք.
- 19.8 Ընկերության իրավախորհրդատուն՝ որպես դիտորդ.
20. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի սահմանած տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
21. Ընկերության Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չեն կարող սահմանվել ավելի վաղ, քան ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:
22. Եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 35 օր շուտ:
23. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:
24. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի Ընկերության յուրաքանչյուր մասնակցի անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Ընկերության կանոնադրական կապիտալում նրան պատկանող մասնակցության մասին: Բաժնետիրական ընկերության՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում կանոնադրական կապիտալում բաժնետիրոջը պատկանող մասնակցության մասին տվյալները պետք է լինեն ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի:

25. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը պետք է ժողովի անցկացումից առնվազն 10 օր առաջ տրամադրվի Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում:
26. Ընկերության մասնակցի պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:
27. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Ընկերության բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:
28. Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովը նախագահում է Ընկերության Խորհրդի նախագահը:
29. Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի քարտուղար է հանդիսանում Ընկերության իրավախորհրդատուն, եթե ժողովը այլ անձ չընտրի:
30. Ընդհանուր ժողովն (ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ) իրավասու է քննարկել և որոշումներ ընդունել միայն օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ: Ընդհանուր ժողովը չի կարող փոփոխել ժողովի օրակարգը:
31. Ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացվող հարցերը պետք է լինեն ամբողջական և ճշգրիտ, առաջարկները՝ հստակ ձևակերպված և հիմնավորված: Ընդհանուր ժողովի քարտուղարն իրավունք ունի վերոհիշյալ պահանջին չհամապատասխանող նյութերը վերադարձնել ներկայացնողին՝ լրամշակման նպատակով:
32. Ընդհանուր ժողովի նախագահը հերթականությամբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը: Յուրաքանչյուր հարցի մասով զեկուցողին հրավիրում է քարտուղարը (եթե տվյալ հարցով զեկուցող կա): Հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ բաժնետերերի կողմից առաջադրվող հարցերին:
33. Հարցի վերաբերյալ պարզաբանումներ տալուց հետո զեկուցողը հեռանում է Ընդհանուր ժողովի անցկացման աշխատասենյակից:
34. Ընդհանուր ժողովի նախագահը՝ քննարկվող հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար քննարկման արդյունքներով ձևակերպված առաջարկությունը դնում է քվեարկության: Ընդհանուր ժողովում քննարկված յուրաքանչյուր հարցի քվեարկության արդյունքներով Ընդհանուր ժողովը կայացնում է համապատասխան որոշում: Օրակարգի բոլոր հարցերը քննարկելուց հետո Ընդհանուր ժողովի նախագահը հայտարարում է Ընդհանուր ժողովը փակված: Ընդ որում՝ օրենքով չարգելված դեպքերում Ընդհանուր ժողովը օրակարգի յուրաքանչյուր հարցով կամ հարցերով քննարկումները կարող է տեղափոխել հաջորդ ընդհանուր ժողով:

ՀՈԴՎԱԾ 10. ԽՈՐՀՈՒՐԴ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է Ընկերության Խորհրդի կողմից՝ Օրենքով և կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:
2. Ընկերության Խորհուրդը կազմված է 5 անդամից:
3. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ընդհանուր ժողովում Ընկերության ներկա բաժնետերերի կողմից, իսկ Ընկերության Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովում Ընկերության ներկա բաժնետերերի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:
4. Ընդհանուր ժողովին Ընկերության Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ Խորհրդի ձևավորման դեպքի):
5. Խորհրդի անդամները.
 - 5.1 Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և տվյալ Ընկերության գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

- 5.2 Ընկերությունը պարտավոր է Խորհրդի սահմանած կարգով և պայմաններով վարձատրել կամ փոխհատուցել Խորհրդի անդամներին՝ նրանց կատարած աշխատանքի կամ պաշտոնավարման համար:
- 5.3 Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանում է Ընկերության Ընդհանուր ժողովը սահմանելով այն անժամկետ կամ որոշակի ժամկետով, ընդ որում վերջինս չի կարող մեկ տարուց պակաս լինել:
6. Խորհրդի նախագահին ընտրում է Խորհուրդը՝ Խորհրդի անդամների կազմից:
7. Խորհրդի նախագահը.
- 7.1 կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
- 7.2 գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը.
- 7.3 կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.
- 7.4 նախագահում է Ընկերության ընդհանուր ժողովում.
- 7.5 կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:
8. Խորհրդի իրավասություններն են՝
- 8.1 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Ընկերության հեռանկարային զարգացման և գործարար ծրագրերի հաստատումը.
- 8.2 Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
- 8.3 Ընկերության գործադիր մարմնի անդամների, պատասխանատու ակտուարի, ակտուարային ստորաբաժանման աշխատակիցների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
- 8.4 Ընկերության ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Ընկերության ներքին աուդիտի ղեկավարի և անդամների նշանակումը, ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի ղեկավարի և անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
- 8.5 Ընկերության տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
- 8.6 Ընկերության կազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.
- 8.7 շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.
- 8.8 Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.
- 8.9 Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը.
- 8.10 Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.
- 8.11 Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումներից բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.
- 8.12 Ընկերության կողմից ապահովագրական գործունեության իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.
- 8.13 Ընկերության տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Ընկերության ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը.
- 8.14 սույն կանոնադրության 9-րդ հոդվածի 1-ին կետի 1.2, 1.12 – 1.16, 1.18-1.23 ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումն Ընկերության Ընդհանուր ժողովի քննարկմանը.
- 8.15 Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
- 8.16 Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

8.17 Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

8.18 Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և ներքին իրավական ակտերի սահմանումը.

8.19 օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

9. Սույն կանոնադրության 10-րդ հոդվածի 8-րդ կետի ենթակետերում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմիններին կամ այլ անձանց:
10. Ընկերության Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն եռամսյակը մեկ:
11. Ընկերության Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը կարգավորվում է սույն կանոնադրությամբ:
12. Առնվազն տարին մեկ Խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունն ու ներքին իրավական այլ ակտերը:
13. Առնվազն եռամսյակը մեկ Խորհուրդը պետք է քննարկի Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման, Գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի (ակտուարային ստորաբաժանման ղեկավարի) հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:
14. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Ընկերության գործադիր տնօրենի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, ՀՀ Կենտրոնական բանկի, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետերերի) գրավոր պահանջով:
15. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով՝ նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Սույն կանոնադրության 10-րդ հոդվածի 8-րդ կետի 8.3, 8.4, 8.9 և 8.13 ենթակետերում նշված, ինչպես նաև Ընկերության հեռանկարային զարգացման կամ գործարար ծրագրի հաստատումը, Խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:
16. Խորհրդի նիստը քվորում ունի և իրավասու է քննարկել օրակարգում ընդգրկված հարցերը, եթե նիստին ներկա են Խորհրդի անդամների թվի առնվազն կեսը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Օրենքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ Ընդհանուր ժողովի հաստատած Խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:
17. Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:
18. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Ընկերության Գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների վերաբերյալ հարցերի: Գործադիր տնօրենը Խորհրդի նիստերին մասնակցում է Խորհրդակցական ձայնի իրավունքով:
19. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝
 - 19.1 նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
 - 19.2 նիստին մասնակցած անձինք.
 - 19.3 նիստի օրակարգը.
 - 19.4 քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր Խորհրդի անդամի.

- 19.5 քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների և Խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.
- 19.6 նիստում ընդունված որոշումները:
20. Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող Խորհրդի բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:
21. Ընկերության Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը: Ընկերության Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:
22. Խորհրդի նախագահը ստորագրում է նիստում ընդունված որոշումները և պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:
23. Ընկերության Խորհրդի նիստերի քարտուղար է հանդիսանում Ընկերության իրավախորհրդատուն, եթե Խորհուրդն այլ անձ չընտրի:
24. Ընկերության Խորհրդի նիստերի գումարման մասին ծանուցումը Խորհրդի բոլոր անդամներին ուղարկվում է այդ նիստի կայացման օրվանից առնվազն 10 (տաս) օր առաջ: Ծանուցումը կատարվում է գրավոր ձևով կամ էլեկտրոնային փոստով կամ ֆաքսիմիլային կապով:
25. Նիստի օրակարգում ներգրավվող բոլոր հարցերը ներկայացվում են Խորհրդի նիստերի պատասխանատու քարտուղարին նիստից առնվազն 5 (հինգ) օր առաջ,
26. Նիստի օրակարգը հաստատվում է Խորհրդի նիստի սկզբում:
27. Խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.
- 27.1 լինեն ամբողջական և ճշգրիտ, առաջարկները՝ հստակ ձևակերպված և հիմնավորված.
- 27.2 Ընկերության Գործադիր տնօրենի տեղակալների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Ընկերության համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կարծիքները, դիտողությունները, առաջարկությունները հաշվի առած և վիճավորված:
28. Նիստերի պատասխանատու քարտուղարն իրավունք ունի վերոհիշյալ պահանջներին չհամապատասխանող նյութերը վերադարձնել ներկայացնողին՝ լրամշակման նպատակով:
29. Խորհրդի նախագահը (նիստի նախագահողը) հերթականությամբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը: Յուրաքանչյուր հարցի մասով զեկուցողին, հրավիրում է Խորհրդի նիստի պատասխանատու քարտուղարը:
30. Խորհրդի նիստում հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ Խորհրդի անդամների կողմից առաջադրվող հարցերին:
31. Խորհրդի նախագահը՝ քննարկվող հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար քննարկման արդյունքներով ձևակերպված առաջարկությունը դնում է քվեարկության:
32. Խորհրդի անդամը կարող է պահանջել նիստը վարողից՝ քվեարկության դնել իր առաջարկությունը:
33. Կումուլյատիվ քվեարկության դեպքում քվեարկության են դրվում մեկից ավելի առաջարկություններ, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ Խորհրդի անդամը քվեարկում է կողմ, դեմ, ձեռնպահ: Այս դեպքում Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է կողմ քվեարկել միայն մեկ առաջարկությանը:
34. Խորհրդի նիստում քննարկված յուրաքանչյուր հարցի քվեարկության արդյունքներով Խորհուրդը կայացնում է համապատասխան որոշում:
35. Օրակարգից դուրս մնացած հարցերի քննարկումը Խորհրդի նախագահի առաջարկությամբ կարող են տեղափոխվել հաջորդ նիստ:
36. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Հանձնաժողովների իրավասությունները և գործունեության կարգը սահմանվում են Խորհրդի որոշմամբ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները և Ընկերության այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:
37. Ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝
- 37.1 նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- 37.2 նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով օրենքի համաձայն նրան արգելվում է լինել Ընկերության ղեկավար.
- 37.3 մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից.
- 37.4 օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.
- 37.5 մահացել է:
38. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված վարձատրությունը Ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով:
39. Ընկերությունն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն կանոնադրության 12-րդ հոդվածի 25-րդ կետով նրան փոխհատուցված վարձատրությունը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման (չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) փաստը:

ՀՈԴՎԱԾ 11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆՆԸ

1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Ընկերության գործադիր տնօրենը նշանակվում է Ընկերության Խորհրդի կողմից, իսկ Գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ:
2. Ընկերության Գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Ընկերության անունից կնքում է գործարքներ, գործում է Ընկերության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:
3. Ընկերության Գործադիր տնօրենը՝
 - 3.1 բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
 - 3.2 Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, ինքնուրույն ստորաբաժանումների կանոնադրությունները, Ընկերության կազմակերպական կառուցվածքը և աշխատատեղերը.
 - 3.3 տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
 - 3.4 աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.
 - 3.5 Ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
 - 3.6 ապահովում է Ընկերության Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը.
 - 3.7 իրականացնում է Ընկերության կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի սահմանած իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:
4. Այն հարցերը, որոնք օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ընդհանուր ժողովի, Խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման կամ պատասխանատու ակտուարի իրավասությանը պատկանող, պատկանում են Ընկերության Գործադիր տնօրենի իրավասությանը:
5. Գործադիր տնօրենը Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի սահմանած կարգով:
6. Գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմիններին, ներքին աուդիտին, գլխավոր հաշվապահին, պատասխանատու ակտուարին կամ այլ անձի:

7. Բացառությամբ սույն կանոնադրության 11-րդ հոդվածի 6-րդ կետում սահմանված անձանց, Գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես (90 օրը չգերազանցող ժամկետով) կարող են փոխանցվել այլ անձի, եթե վերջինս համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով Ընկերությունների գործադիր տնօրենների համար սահմանված մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին:
8. Խորհրդի կողմից գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝
 - 8.1 նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
 - 8.2 նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով օրենքի համաձայն նրան արգելվում է լինել Ընկերության գործադիր տնօրեն կամ այլ ղեկավար.
 - 8.3 օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.
 - 8.4 մահացել է:
9. Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով:
10. Ընկերությունն իրավունք ունի գործադիր տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու սույն կանոնադրության 11-րդ հոդվածի 9-րդ կետով նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով գործադիր տնօրենի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման (չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) փաստը:

ՀՈԴՎԱԾ 12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

1. Ընկերության գլխավոր հաշվապահը կամ նման պարտականություններ իրականացնող անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ) իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
2. Գլխավոր հաշվապահին նշանակում է Խորհուրդը՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ:
3. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել որևէ այլ կառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքի: Բացառությամբ սույն կանոնադրության 11-րդ հոդվածի 6-րդ կետում նշված անձանց, գլխավոր հաշվապահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես (իննսուն օրը չգերազանցող ժամկետով) կարող են փոխանցվել այլ անձի, եթե վերջինս համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով Ընկերությունների գլխավոր հաշվապահների համար սահմանված մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին:
4. Գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ Խորհրդին և գործադիր տնօրենին (տնօրինությանն) է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ: Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան: Սույն մասում նշված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար գլխավոր հաշվապահի պատասխանատվությունը չի տարածվում Ընկերության պատասխանատու ակտուարի կողմից օրենքով սահմանված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման, հրապարակման վրա: Ընկերության այն

հաշվետվությունները, որոնք պարունակում են տարբեր տեղեկատվություն, որի պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար պատասխանատու են գլխավոր հաշվապահն ու պատասխանատու ակտուարը, ստորագրում են այդ երկու պաշտոնատար անձինք:

5. Սույն կանոնադրության 12-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում, բացի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պատասխանատվության ձևից և չափերից Ընկերության գլխավոր հաշվապահը կախված խախտման նշանակալիությունից՝ Խորհրդի որոշմամբ կարող է ստանալ նկատողություն, խիստ նկատողություն և ՀՀ Աշխատանքային օրենսգրքով և աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով Ընկերության նախաձեռնությամբ հեռացվել աշխատանքից:

ՀՈԴՎԱԾ 13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

1. Ներքին աուդիտի ղեկավարին և անդամներին նշանակում է Խորհուրդը: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների կամ գլխավոր հաշվապահի հետ փոխկապակցված անձինք:
2. Ներքին աուդիտը, Խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝
 - 2.1 հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ.
 - 2.2 հսկողություն է իրականացնում գործադիր մարմնի, գլխավոր հաշվապահի, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների, պատասխանատու ակտուարի ու ակտուարային ստորաբաժանման կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Ընկերության ներքին իրավական ակտերի, գործադիր մարմնին կամ գլխավոր հաշվապահին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.
 - 2.3 եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:
3. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
4. Յուրաքանչյուր տարի Խորհուրդը հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:
5. Տարեկան ծրագիրն առնվազն պետք է ներառի՝
 - 5.1 այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվի աուդիտորական ստուգում.
 - 5.2 առանձին ոլորտներում աուդիտորական դիտարկման բովանդակության նկարագրությունը:
6. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին (պատճենը՝ գործադիր մարմնին) է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝
 - 6.1 հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.
 - 6.2 արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ: Ընդ որում, եթե խախտումները հետևանք են գործադիր մարմնի, գլխավոր հաշվապահի կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:
7. Ներքին աուդիտի ղեկավարի հաշվետվությունը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները՝
 - 7.1 աուդիտորական դիտարկման նկարագրությունը.
 - 7.2 դիտարկման արդյունքում բացահայտված խախտումներն ու թերությունները և դրանց վերացման վերաբերյալ առաջարկված միջոցառումները.
 - 7.3 հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման մասին ներքին աուդիտի եզրակացությունը:
8. Սույն կանոնադրության 13-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
9. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Ընկերության Խորհրդին, իսկ պատճենը՝ ՀՀ Կենտրոնական բանկին:
10. Ընկերությունում վերստուգիչ հանձնաժողով չի ստեղծվում:

ՀՈԴՎԱԾ 14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱԿՏՈՒԱՐԸ

1. Ընկերության պատասխանատու ակտուարին նշանակում է Խորհուրդը:
2. Ընկերության պատասխանատու ակտուարը՝
 - 2.1 ստուգում է ապահովագրավճարների հաշվարկման և տեխնիկական պահուստների ձևավորման համապատասխանությունը Օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին.
 - 2.2 պարզում է, թե ապահովում է արդյոք ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը հաշվարկված ապահովագրավճարներով և ձևավորված պահուստներով.
 - 2.3 հաշվարկում է ապահովագրական սակագները, ապահովագրավճարները, ինչպես նաև ապահովագրական, կենսաթոշակի և անուիտետի գումարները.
 - 2.4 հավաստում է Ընկերության կողմից գործունեության նկատմամբ պահանջների ու տնտեսական նորմատիվների վերաբերյալ Օրենքով սահմանված պահանջների պահպանումը.
 - 2.5 պատրաստում, ներկայացնում կամ հրապարակում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այն հաշվետվությունները, որոնք ունեն հետևյալ բովանդակությունը՝
 - 2.5.1 տեխնիկական պահուստների հաշվարկման սկզբունքներն արտացոլող հաշվետվություն,
 - 2.5.2 Ընկերության պահուստների, պահուստներին համարժեք ակտիվների և ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների համարժեքությունն արտացոլող հաշվետվություն,
 - 2.5.3 ապահովագրավճարների (ապահովագրական սակագների) բավարար լինելն արտացոլող հաշվետվություն,
 - 2.5.4 Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված Ընկերության տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունն արտացոլող հաշվետվություն:
3. Գործադիր մարմինը պարտավոր է պատասխանատու ակտուարին տրամադրել իր լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ:
4. Պատասխանատու ակտուարը պարտավոր է եռամսյակը մեկ Խորհրդին ներկայացնել հաշվետվություն:
5. Եթե պատասխանատու ակտուարը (ակտուարային ստորաբաժանման ղեկավարը) իր լիազորություններն իրականացնելիս բացահայտել է, որ ապահովագրավճարները չեն հաշվարկվել, իսկ տեխնիկական պահուստները չեն ձևավորվել սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, և դրա արդյունքում ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը դրվել է վտանգի տակ, ապա պատասխանատու ակտուարն այդ մասին պետք է անհապաղ, բայց ոչ ավելի, քան հինգ օրվա ընթացքում գրավոր տեղեկացնի Խորհրդին, գործադիր մարմնին և ՀՀ Կենտրոնական բանկին:
6. Ընկերության տարեկան հաշվետվությունը պետք է ներառի պատասխանատու ակտուարի հաշվետվությունը և ապահովագրավճարների ու տեխնիկական պահուստների՝ Օրենքով սահմանված կարգով հաշվարկված լինելու մասին եզրակացությունը:

ՀՈԴՎԱԾ 15. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

1. Ընկերությունը հաշվապահական հաշվառում վարում են ՀՀ Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:
2. Ընկերությունը կազմում, հրապարակում և ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացնում տարեկան և եռամսյակային ֆինանսական և այլ հաշվետվություններ: ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանվել հաշվետվությունների ներկայացման այլ պարբերականություն:
3. Ընկերությունը հրապարակում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկությունները, դրանում սահմանված կարգով և ժամկետներում:
4. Ընկերության կողմից ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

5. Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են Հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշների համաձայն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 16. ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընկերությունը վերակազմավորվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը, «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», ինչպես նաև տվյալ հարաբերությունները կարգավորող ՀՀ այլ օրենքներին և նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:
2. Ընկերությունը լուծարման հիմքերը՝
- Ընկերության Ընդհանուր ժողովի որոշմամբ (ինքնալուծարում).
 - լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում.
 - Ընկերության սնանկության դեպքում:
3. Ընկերության լուծարումը Ընդհանուր ժողովի որոշմամբ (ինքնալուծարում).
- 3.1 Ընկերության ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Ընկերության լուծարման մասին, եթե Ընկերությունը փոխանցել է իր ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ, կատարել է ապահովագրության պայմանագրերից բխող բոլոր պարտավորությունները և ունի բավարար միջոցներ բոլոր այլ պարտատերերի պահանջները բավարարելու համար:
- 3.2 Ընդհանուր ժողովի կողմից Ընկերության լուծարման նախնական համաձայնություն ստանալու համար ՀՀ Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման կայացման համար խորհուրդն ընդհանուր ժողով է ներկայացնում Ընկերության ընթացիկ տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղված միջոցների առկայությունը հավաստող և պարտատերերի պահանջների բավարարման համար անհրաժեշտ ժամկետները նախատեսող տեղեկանք:
- 3.3 Ընկերության Ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության լուծարման նպատակով ընդհանուր ժողովի կողմից նախնական համաձայնություն ստանալու համար ՀՀ Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման հիման վրա Ընկերությունը ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացնում Ընկերության լուծարման նախնական համաձայնություն ստանալու դիմում՝ կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր և տեղեկություններ, որոնց ցանկը սահմանվում է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:
- 3.4 ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից Ընկերությանը լուծարման նախնական համաձայնություն տալու դեպքում Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում իր ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ փոխանցելու և ապահովագրական գործունեությունից բխող իր բոլոր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու ուղղությամբ:
- 3.5 Ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ փոխանցելուց և ապահովագրական գործունեությունից բխող իր բոլոր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելուց հետո միայն ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել:
- 3.6 Լուծարման մասին որոշման ընդունումից հետո Ընկերությունը եռօրյա ժամկետում ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացնում լուծարման թույլտվություն ստանալու դիմում՝ կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր և տեղեկություններ, որոնց ցանկը սահմանվում է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:
- 3.7 ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը լուծարման թույլտվություն տալու դեպքում ընդունում է նաև Ընկերության ապահովագրական գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում:
4. Լուծարային հանձնաժողով.
- 4.1 Ընկերության լուծարային հանձնաժողովը ստեղծվում է Ընկերության լուծարման թույլտվությունը տալու մասին ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշման կայացումից հետո՝ հնգօրյա ժամկետում:
- 4.2 Լուծարային հանձնաժողովը ստեղծվում է Ընկերությունը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով:

- 4.3 Լուծարային հանձնաժողովը կազմվում է առնվազն երեք անդամից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխան որակավորում ունեցող անձինք:
- 4.4 Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է տվյալ Ընկերության գործադիր մարմինը, եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:
- 4.5 Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում լուծարվող Ընկերության կառավարման լիազորությունները:
- 4.6 Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից՝ հնգօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում և ծանուցում է ՀՀ Կենտրոնական բանկին Ընկերության լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետների մասին, որը չի կարող պակաս լինել 60 օրից:
- 4.7 Լուծարային հանձնաժողովը չստեղծվելու դեպքում Ընկերության լուծարային հանձնաժողովը ստեղծվում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Ընկերության կառավարման մարմինները պարտավոր են լուծարային հանձնաժողով ստեղծվելու պահից՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողով հանձնել Ընկերության կնիքը, դրոշմակնիքները, կապարակնիքը, ձևաթղթերը, փաստաթղթերը, նյութական և այլ արժեքներ:
- 4.8 Լուծարային հանձնաժողով ստեղծվելու պահից՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովի նախագահը դիմում է պետական լիազորված մարմին՝ լուծարվող Ընկերության ֆիրմային անվանման մեջ ներառելու «լուծարվող ապահովագրական ընկերություն» բառերը:
- 4.9 Լուծարային հանձնաժողովը պարտավոր է սույն կանոնադրության 16-րդ հոդվածի 4-րդ կետի 4.8 ենթակետով սահմանված կարգով լուծարվող Ընկերության ֆիրմային անվանման մեջ փոփոխություն կատարելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, փոխել լուծարվող Ընկերության կնիքը, դրոշմակնիքը, կապարակնիքը, ձևաթղթերը՝ ներառելով «լուծարվող ապահովագրական ընկերություն» բառերը:
- 4.10 Լուծարային հանձնաժողովը մինչև պարտատերերի պահանջների բավարարումը սկսելը՝
- 4.10.1 հաշվեգրում և գնահատում է լուծարվող Ընկերության ակտիվներն ու պասսիվները. ձեռնարկում է Ընկերության բոլոր պարտատերերին հայտնաբերելու և Ընկերության դեբիտորական պարտքերը ստանալու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ.
- 4.10.2 միջոցներ է ձեռնարկում լուծարվող Ընկերության ակտիվներն առավել շահավետ իրացնելու համար.
- 4.10.3 միջոցներ է ձեռնարկում լուծարվող Ընկերության նկատմամբ առկա պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ.
- 4.10.4 որոշում է Ընկերության պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները բաժնետերերի միջև բաշխելու կարգը:
- 4.11 Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ 7-օրյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը, որը պարունակում է տեղեկություններ՝
- 4.11.1 լուծարվող Ընկերության գույքի կազմի մասին.
- 4.11.2 պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ Ընկերության հաշվեկշիռում արտացոլված կամ Ընկերությանը ներկայացված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և Օրենքով, ինչպես նաև սույն կանոնադրության 16-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը.
- 4.11.3 պարտատերերի ներկայացրած պահանջների քննարկման արդյունքների մասին.
- 4.11.4 ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:
- 4.12 Լուծարային հանձնաժողովը պարտավոր է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը հրապարակած թերթի մեկ օրինակը հրապարակման օրը ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ:

- 4.13 Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջները բավարարում է Օրենքով, ինչպես նաև սույն կանոնադրության 16-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված հերթականությամբ, միջանկյալ լուծարային հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հրապարակման օրվանից:
5. Պահանջների բավարարման հերթականությունը
- 5.1 Գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ:
- 5.2 Ընկերության պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին հետևյալ հերթականությամբ՝
- 5.2.1 առաջին՝ լուծարային հանձնաժողովի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները:
- 5.2.2 երկրորդ՝ կյանքի ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները, եթե Ընկերությունն իրականացնում է կյանքի ապահովագրություն, և ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները, եթե Ընկերությունն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն:
- 5.2.3 երրորդ՝ առաջին և երկրորդ հերթերում չընդգրկված պահանջները:
- 5.2.4 չորրորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ Ընկերության պարտավորությունները:
- 5.2.5 հինգերորդ՝ Ընկերության բաժնետերերի պահանջները:
- 5.3 Սույն կանոնադրության 16-րդ հոդվածի 5-րդ կետի 5.2 ենթակետով սահմանված՝ Ընկերության պարտատերերի պահանջների բավարարման հերթականության երկրորդ հերթով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում Ընկերության բաժնետերերի և Ընկերության հետ փոխկապակցված անձինք, որոնց նկատմամբ Ընկերության պարտավորությունները բավարարվում են հինգերորդ հերթում:
- 5.4 Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ: Միևնույն հերթի պարտատերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:
- 5.5 Լուծարային հանձնաժողովի կողմից պարտատիրոջ պահանջները մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում մինչև Ընկերության լուծարային հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի բողոքարկելու լուծարային հանձնաժողովի գործողությունները: Այս մասով նախատեսված հայցադիմումը դատարանը քննում է եռօրյա ժամկետում: Դատարանի վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:
- 5.6 Եթե պարտատերը պահանջ է ներկայացրել պարտատերերի պահանջների ներկայացման՝ սույն օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո, ապա նրա պահանջը բավարարվում է լուծարային այն միջոցների հաշվին, որոնք կմնան պարտատերերի՝ ժամանակին ներկայացված պահանջների բավարարումից հետո:
- 5.7 Եթե պահանջ ներկայացրած և լուծարային հանձնաժողովի կողմից հաշվառված պարտատերը մինչև տվյալ հերթի պահանջների բավարարման համար լուծարային հանձնաժողովի կողմից առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլով հայտարարված ժամկետի վերջին օրը չի ներկայանում իր պահանջը ստանալու համար, ապա նման պարտատիրոջը հատկացվելիք միջոցները կամ գույքն օրենքով սահմանված կարգով հանձնվում են նոտարի դեպոզիտ կամ տրամադրվում ի պահ:
- 5.8 Յուրաքանչյուր հերթի պահանջի բավարարումը սկսելուց առաջ լուծարային հանձնաժողովն առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլով հայտնում է տվյալ հերթի պահանջների բավարարման վայրի, կարգի և ժամկետների մասին տեղեկություններ: Պահանջների բավարարման վայրին, կարգին և ժամկետներին վերաբերող հիմնական տեղեկությունները, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրավաբանական ուժ են ստանում

առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլով հրապարակվելու հաջորդ օրվանից:

- 5.9 Սույն կանոնադրության 16-րդ հոդվածի 5-րդ կետի 5.2 ենթակետում ընդգրկված պահանջների բավարարման ժամկետը չի կարող 21 օրից պակաս լինել: Ընդ որում, պահանջների բավարարման սահմանված ժամկետը որևիցե հիմքով բաց թողնելու պատճառաբանությամբ ենթակա չէ վերականգնման:
- 5.10 Լուծարային հանձնաժողովի կողմից մերժված պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են ներված:
6. Լուծարային հանձնաժողովի նկատմամբ վերահսկողությունը և հաշվետվությունները.
 - 6.1 Ընկերության լուծարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով լուծարման գործընթացում գտնվող Ընկերությունում ՀՀ Կենտրոնական բանկը կարող է իրականացնել վերստուգում "Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
 - 6.2 Լուծարային հանձնաժողովը պարտավոր է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ձևով, հաճախականությամբ և ժամկետներում հաշվետվություններ ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ:
 - 6.3 Լուծարային հանձնաժողովը պարտավոր է ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ առնվազն ամիսը մեկ տեղեկություններ հրապարակել առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում:
 - 6.4 ՀՀ Կենտրոնական բանկն իրավունք ունի լուծարային հանձնաժողովից պահանջելու ցանկացած տեղեկություն նրա գործունեության վերաբերյալ:
7. Լուծարային հաշվեկշռի հաստատումը և լուծարային հանձնաժողովի գործունեության դադարեցումը.
 - 7.1 Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարային հաշվեկշիռը և այն լուծարվող Ընկերության ընդհանուր ժողովի կողմից դրա հաստատվելու պահից ետոյա ժամկետում ներկայացնում է ՀՀ Կենտրոնական բանկ:
 - 7.2 ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշիռը չհաստատելու դեպքում լուծարային հանձնաժողովը տասնօրյա ժամկետում վերացնում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշռի հաստատումը մերժելու հիմքերը, և լուծարային հաշվեկշիռը լուծարվող Ընկերության ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո այն հաստատելու մասին նոր դիմում է ներկայացնում ՀՀ Կենտրոնական բանկ:
 - 7.3 ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից ետոյա ժամկետում լուծարային հանձնաժողովը Ընկերության լուծարման վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով հրապարակում է տեղեկատվություն, որից հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է Ընկերության լուծարման հետ կապված պարտավորություններից:

ՀՈԴՎԱԾ 17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի աուդիտի՝ Ընդհանուր ժողովի որոշմամբ ներգրավված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի կողմից (այսուհետ՝ արտաքին աուդիտ): ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել Ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող այն չափանիշները, որոնց համապատասխանելու դեպքում աուդիտ իրականացնող անձը կարող է աուդիտորական ծառայություն մատուցել Ընկերությանը:
2. Ընկերության աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել Խորհրդի կողմից՝ Ընկերության միջոցների հաշվին:
3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում աուդիտն իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց

վճարում են աուդիտ պահանջող բաժնետերերի: Ընդ որում, սույն մասում նշված անձինք կարող են Ընկերությունից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, և Ընկերությունը պարտավոր է հատուցել դրանք, եթե այդ աուդիտն ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշմամբ արդարացված է եղել Ընկերության համար:

4. Արտաքին աուդիտի ընտրություն կատարելիս Ընկերությունը պետք է առաջնորդվի հետևյալ չափանիշներով՝
 - 4.1 աուդիտորական կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում և/կամ միջազգային ճանաչումը (հեղինակությունը).
 - 4.2 աուդիտորական կազմակերպության և աուդիտորի անկախության նկատմամբ պահանջի սահմանում՝ համաձայն «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված սկզբունքների:
5. Ընկերության կողմից արտաքին աուդիտի ընտրություն կատարելիս պետք է սահմանեն հետևյալ պայմանները՝
 - 5.1 աուդիտի ընդգրկման բնագավառները.
 - 5.2 աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները.
 - 5.3 աուդիտի իրականացման արժեքը:
6. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացություն կազմելու պարտավորության ամրագրումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Ընկերության ղեկավարության) կազմում:
7. Ընկերությունն աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից ՀՀ Կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում, տեխնիկական պահուստների, հիմնական տնտեսական նորմատիվների պահանջներին, տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման՝ Օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին:
8. Աուդիտորական ստուգում իրականացնելու ընթացքում Ընկերության ֆինանսական վիճակի՝ իր կարծիքով էական վատթարացման փաստեր, ինչպես նաև ներքին համակարգերի (այդ թվում՝ ներքին հսկողության համակարգի) թերություններ հայտնաբերելու դեպքում աուդիտն իրականացնող անձը պարտավոր է դրանց մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել ՀՀ Կենտրոնական բանկին:
9. Աուդիտորի եզրակացությունը և հաշվետվությունն Ընկերությունը ՀՀ Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:
10. ՀՀ Կենտրոնական բանկի պահանջով աուդիտն իրականացնող անձը պարտավոր է ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացնել Ընկերության աուդիտի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, նույնիսկ եթե դրանք առևտրային, բանկային, ապահովագրական կամ այլ գաղտնիք կազմեն: Սույն մասով սահմանված պարտավորությունների չկատարման համար աուդիտն իրականացնող անձը կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:
11. Ընկերության աուդիտն իրականացնող անձը եզրակացություն է ներկայացնում նաև՝
 - 11.1 Ընկերության տեխնիկական պահուստների համարժեքության մասին.
 - 11.2 սույն օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Ընկերության տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխանության մասին.
 - 11.3 Ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման՝ սույն օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.
 - 11.4 Ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ սույն օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.
 - 11.5 Ընկերության ներքին տեղեկատվական համակարգի առկայության կամ դրակի մասին.
 - 11.6 ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության ու հավաստիության մասին:
12. ՀՀ Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համատեղ նորմատիվ իրավական ակտերով կարող են աուդիտն

իրականացնող անձի համար սահմանվել աուդիտին և աուդիտորական եզրակացության ձևին և բովանդակությանը վերաբերող առավել մանրամասն պահանջներ:

13. ՀՀ Կենտրոնական բանկը կարող է պահանջել աուդիտին իրականացնող անձին տալ լրացուցիչ բացատրություններ և պարզաբանումներ՝ իր եզրակացության և հաշվետվության վերաբերյալ:
14. Եթե աուդիտորական եզրակացությունը և (կամ) հաշվետվությունը կազմվել են Օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջների խախտմամբ, կամ աուդիտը չի իրականացվել օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, ապա ՀՀ Կենտրոնական բանկը կարող է չընդունել այն և պահանջել Ընկերության հաշվին աուդիտ իրականացնող այլ անձի կողմից նոր աուդիտ:

ՀՈԴՎԱԾ 18. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընկերությունը կարող է Հայաստանի Հանրապետության տարածքում բացել մասնաճյուղ և ներկայացուցչություն՝ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
2. Ընկերության մասնաճյուղը Ընկերության՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Ընկերության կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից ապահովագրական գործունեություն է իրականացնում: Մասնաճյուղը կարող է ապահովագրական գործունեություն իրականացնել միայն ապահովագրության այն դասերով, որի համար լիցենզիա է ստացել Ընկերությունը:
3. Ընկերության ներկայացուցչությունն Ընկերության՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Ընկերությունը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Ընկերության անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ:
4. Ներկայացուցչությունն ապահովագրական գործունեություն իրականացնելու իրավունք չունի:
5. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղերը գրանցվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից՝ ներկայացնելով ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով ու բովանդակությամբ հետևյալ փաստաթղթերը՝
 - 5.1. Ընկերության խորհրդի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ բացելու մասին.
 - 5.2. Ընկերության միջնորդագիրը.
 - 5.3. մասնաճյուղի կանոնադրությունը.
 - 5.4. ստեղծվող մասնաճյուղի ղեկավարների գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ձևով.
 - 5.5. ստեղծվող մասնաճյուղի գործարար ծրագիրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ձևով.
 - 5.6. մասնաճյուղին տարածք տրամադրելու, ինչպես նաև մասնաճյուղի տեխնիկական հագեցվածությունը ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարություն.
 - 5.7. ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր և տեղեկատվություն:
6. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող ներկայացուցչությունը գրանցելու համար Ընկերությունը ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացնում՝
 - 6.1 Ընկերության միջնորդագիրը.
 - 6.2 Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչություն ստեղծելու վերաբերյալ Ընկերության կառավարման իրավասու մարմնի որոշումը.
 - 6.3 ներկայացուցչության կանոնադրությունը.
 - 6.4 ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:
7. Ընկերության կողմից ՀՀ տարածքում մասնաճյուղ և/կամ ներկայացուցչություն բացելու վերաբերյալ վերը նշված միջնորդագիրը և պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու պահից՝ 30-օրյա

ժամկետում, ՀՀ Կենտրոնական բանկը գրանցում է մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը և տալիս է գրանցման վկայական, իսկ գրանցումը մերժելու դեպքում մերժման հիմքերի մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ընկերությանը:

8. ՀՀ Կենտրոնական բանկը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին որոշումն ընդունելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմին՝ վերջինիս կողմից մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար:
9. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության դադարեցման (ներառյալ՝ ժամանակավոր դադարեցման) կարգը և պայմանները սահմանվում են ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:
10. Օրենքով նախատեսված կարգով Ընկերությունը կարող է մասնաճյուղ և/կամ ներկայացուցչություն ստեղծել նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:
11. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելիս պետք է ստանա ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը՝ ներկայացնելով ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և բովանդակությամբ հետևյալ փաստաթղթերը՝
 - 11.1 Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու նախնական համաձայնություն ստանալու միջնորդագիր.
 - 11.2 Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծվող մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործարար ծրագիրը.
 - 11.3 ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:
12. Ընկերությունը համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում մասնաճյուղ կկամ ներկայացուցչություն գրանցելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո պարտավոր 10-օրյա ժամկետում հաշվառել այն ՀՀ Կենտրոնական բանկում՝ ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթ:

ՀՈԴՎԱԾ 19. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՐԱ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընկերությունը պարտավոր է մշտապես ունենալ գործող ինտերնետային կայք:
2. Ընկերությունը, իր մասնաճյուղերը պարտավոր են իրենց ինտերնետային կայքում հրապարակել՝
 - 2.1 ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը: Ընդ որում, Ընկերությունը պարտավոր է կանոնադրության սույն կետում նշված ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև մամուլում.
 - 2.2 Ընկերության տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը: Ընդ որում, Ընկերությունը պարտավոր է տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակել նաև մամուլում.
 - 2.3 շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև Ընկերության շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում.
 - 2.4 Ընկերությունում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Ընկերությունում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հետ Ընկերության կնքած ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը և ապահովագրական սակագինը.
 - 2.5 Խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները (անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը) խորհրդի անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Ընկերությունից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Ընկերության համար որոշակի աշխատանք

կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հետ Ընկերության կնքած ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը և ապահովագրական սակագինը:

- 2.6 Սույն կանոնադրության 19-րդ հոդվածի 2-րդ կետի 2.1-2.5-րդ ենթակետերում նշված տեղեկություններից բացի, ՀՀ Կենտրոնական բանկը կարող է պահանջել Ընկերությունից իր ինտերնետային կայքում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաճախականությամբ և կարգով հրապարակել նաև այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային, ապահովագրական կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների:
- 2.7 Ընկերությունը պարտավոր է հրապարակել Սույն կանոնադրության 19-րդ հոդվածի 2-րդ կետի 2.1-2.5-րդ ենթակետերում նշված տեղեկությունների մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.8 Ընկերությունները պարտավոր են իրենց ինտերնետային կայքում և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Ընկերության գլխամասային գրասենյակում, Ընկերության մասնաճյուղերում և ներկայացուցչություններում) հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իրենց կողմից առաջարկվող ապահովագրական ծառայությունների վերաբերյալ՝ ըստ ապահովագրության տեսակների, դասերի և ենթադասերի, այդ թվում՝ ապահովագրության պայմանները և առաջարկվող ապահովագրական սակագները:
3. Ընկերությունը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 120-օրյա ժամկետում, մամուլում հրապարակել աուդիտորական եզրակացությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը, իսկ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հրապարակել իրենց եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը:
4. Ընկերությունը պարտավոր է ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Ընկերության գլխամասային գրասենյակում, Ընկերության մասնաճյուղերում և ներկայացուցչություններում):
5. Ընկերությունը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել՝
 - 5.1 Ընկերության պետական գրանցման վկայականի և Ընկերության կանոնադրության պատճենները:
 - 5.2 բաժնետոմսերի բաց բաժանորդագրության դեպքում՝ Ընկերության բաժնետոմսերի թողարկման ազդագրի պատճենը:
 - 5.3 Ընկերություն թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ արժեթղթերի շուկան կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները:
 - 5.4 Օրենքով նախատեսված այլ տեղեկություններ կամ փաստաթղթերի պատճեններ:
6. Սույն կանոնադրության 19-րդ հոդվածի 5-րդ կետում նշված տեղեկությունների տրամադրման համար զանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման և (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից: Ընկերությունը պարտավոր է իր գլխամասային գրասենյակում, Ընկերության մասնաճյուղերում և ներկայացուցչություններում տեսանելի վայրում, սույն կետում նշված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի և ժամանակի մասին փակցնել հայտարարություն:
7. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանվել սույն կանոնադրության 19-րդ հոդվածում նշված տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգ:
8. Ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի Ընկերությունից անվճար ստանալու Ընկերության վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:
9. Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2 և ավելի տոկոսին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով Ընկերությունը նրան (նրանց) պետք է անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները, թեկուզ դրանք կազմեն ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք՝
 - 9.1 Խորհրդի, Գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի վերաբերյալ սույն կանոնադրության 19-րդ հոդվածում նշված տեղեկությունները:

- 9.2 Խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Ընկերությունից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Ընկերության համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հետ Ընկերության կնքած ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը և ապահովագրական սակագինը, Ընկերությունում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Ընկերությունում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հետ Ընկերության կնքած ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը և ապահովագրական սակագինը.
- 9.3 Ընկերության և նրա հետ կապված անձանց միջև կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են Ընկերության կողմից Օրենքով սահմանված գործառնությունների իրականացման հետ.
- 9.4 Ընկերության կողմից Ընկերության հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.
- 9.5 Ընկերության՝ միանման քաղաքականություն իրականացնող բաժնետերերի խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև Ընկերության՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող բաժնետերերի անունները (անվանումները).
- 9.6 Ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Ընկերության գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած՝ Ընկերության ներքին ակտերի, Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների, Ընկերության կողմից պետական մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների, Ընդհանուր ժողովի, Խորհրդի, տնօրինության նիստերի արձանագրությունների, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների պատճենները, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից Ընկերության և (կամ) Ընկերության ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումների պատճենները, ներքին աուդիտի ղեկավարի կողմից Խորհրդին և Գործադիր տնօրենին (տնօրինությանը) ներկայացված հաշվետվությունների պատճենները.
- 9.7 այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում Ընկերության ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20 և ավելի տոկոս մասնակցություն կամ նրանց որոշումների վրա ներազդելու հնարավորություն:
- 10 Ընկերության բոլոր բաժնետերերին պետք է տրամադրվեն հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները:
11. Սույն կանոնադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության բաժնետիրոջ ստացած տեղեկությունները նրա կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաև դրանք չեն կարող օգտագործվել Ընկերության գործարար համբավն արատավորելու, Ընկերության բաժնետերերի կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ օրենքով և (կամ) պայմանագրով սահմանված կարգով:
12. Խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի, գլխավոր հաշվապահի վերաբերյալ, ինչպես նաև Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկատվությունը պետք է ներառի նաև՝
- 12.1 նրանց անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը.
- 12.2 մասնագիտությունը և կրթությունը.
- 12.3 վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները.
- 12.4 տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը.

- 12.5 տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը.
 - 12.6 Ընկերության բաժնետեր հանդիսացող Խորհրդի անդամին, Գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ Խորհրդի անդամի թեկնածուին և նրանց հետ փոխկապակցված անձանց պատկանող՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) քանակը.
 - 12.7 տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ.
 - 12.8 փոխհարաբերությունների բնույթը տվյալ Ընկերության և Ընկերության հետ կապված անձանց հետ.
 - 12.9 Ընկերության կանոնադրությամբ կամ ներքին իրավական ակտերով նախատեսված այլ տվյալներ:
13. Ընկերությունն իրավունք չունեն իրենց գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իրենց անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ Ընկերության վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ տվյալ Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:
 14. Ընկերության կողմից սույն կանոնադրության 19-րդ համաձայն հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ: